ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «19» մայիսի 2014 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 11-Ա/Ք

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կանոնադրության» 12-րդ կետի 4-րդ ենթակետը և առաջնորդվելով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2013 թ. մայիսի 21-ի N 14-Ա/Ք հրամանով հաստատված «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգի» 2-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ

1. Կազմակերպել գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«19» մայիսի 2014թ.
N 11-Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթն (այսուհետև՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) նախագահի 2014 թվականի մայիսի 19-ի N 11-Ա/Ք հրամանի:

1. Կոմիտեն գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար մրցութային կարգով կտրամադրի դրամաշնորհներ՝ յուրաքանչյուրը մինչև 65000.0 հազար ՀՀ դրամ:

2. Մրցույթի մասնակցության հայտ (այսուհետև՝ Հայտ) կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունները կամ բուհերը (այսուհետև՝ Կազմակերպություն):

3. Հայտ ներկայացվում է ինչպես մեկ, այնպես էլ մի քանի Կազմակերպությունների կողմից համատեղ օգտագործման նպատակով գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար: Այդ դեպքում հայտ ներկայացվում է այն Կազմակերպության կողմից, որտեղ գիտական սարքը/սարքավորումը տեղակայվելու է:

4. Մրցույթի մասնակցության հայտ չեն կարող ներկայացնել այն Կազմակերպությունները, որոնք հանդիսանում են 2013 թ. անցկացված գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթի շահառու:

5. Հայտը պարունակում է.

1) Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար գիտական սարքի/սարքավորման անհրաժեշտության հիմնավորում, իսկ համատեղ օգտագործման գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման դեպքում՝ նաև շահագրգիռ

Կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության համար այդ սարքի/սարքավորման անհրաժեշտության մասին հիմնավորում,

2) Կազմակերպությունում սարքի/սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների առկայության մասին տեղեկություններ:

6. Հայտը Կոմիտե ներկայացնել Մրցույթի հրավերի հավելված N 1-ի ձևերին համապատասխան՝ Կազմակերպության ղեկավարի գրավոր դիմումով (հավելված N 2), առձեռն (աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե):

7. Հայտը ներկայացնել տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

8. Հայտի տպագիր տարբերակը ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Sylfaen» տառատեսակով: Էջերի բոլոր կողմերից թողնել 2.5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ խտասկավառակով:

9. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2014 թ. հուլիսի 11-ը:

10. Մրցույթին ներկայացված Հայտերը բացվում են 2014 թ. հուլիսի 14-ին՝ ժամը 12:00-ին:

11. Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) անցկացնում է Հայտերի տեխնիկական ստուգում՝ անհրաժեշտության դեպքում վերադարձնելով լրամշակման:

12. Սույն հրավերի պահանջներին համապատասխանող Հայտերը տրամադրվում են դրանց գնահատման նպատակով ձևավորված հանձնաժողովին (այսուհետև՝ Հանձնաժողով):

13. Հանձնաժողովը իրականացնում է Հայտերի գնահատման գործընթացը, որի ժամանակ նախապատվություն տրվում է այն Հայտին, որում.

1) առկա է արտաբյուջետային միջոցների հաշվին համաֆինանսավորող կողմ՝ ըստ համաֆինանսավորման ծավալների,

2) գիտական սարքը/սարքավորումը առաջարկվում է մի քանի Կազմակերպությունների կողմից համատեղ օգտագործման համար:

14. Հանձնաժողովի գնահատման արդյունքների հիման վրա Վարչությունը ձևավորում է Հայտերի վարկանիշային ցանկ և ներկայացնում Կոմիտեի նախագահի հաստատմանը:

15. Կոմիտեի նախագահը, ելնելով ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի

արդիականացում» միջոցառման համար նախատեսված միջոցների չափից, հաստատում է գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթի շահառուների ցանկը:

16. Կոմիտեի և Մրցույթի շահառուի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներով սարքավորման ձեռքբերման հանձնարարության պայմանագիր:

17. Կազմակերպությունում գիտական սարքի/սարքավորման գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելով ներկայացուցիչ Կոմիտեից:

Հավելված N 1
Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական
բազայի արդիականացման համար գիտական սարքերի և
սարքավորումների ձեռքբերման մրցույթի հրավերի

ՀԱՅՏ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

Հայտը հանձնված է «_____» _____ 2014 թ. Ծածկագիր՝ _____
(*լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում*)

Ձև 1

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Գիտական կազմակերպության
   - լրիվ անվանումը _____
   - կրճատ անվանումը _____
   - կազմակերպաիրավական ձևը _____
   - հասցեն _____
   - հեռախոսը _____
   - ֆաքսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
2. Գերատեսչությունը _____
3. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից հայցվող ֆինանսական աջակցության չափը

_____ հազար դրամ

4. Համաֆինանսավորման չափը _____ հազար դրամ
5. Գիտական կազմակերպության ղեկավարի
   - ազգանունը, անունը, հայրանունը _____
   - ստորագրությունը _____

«____» _____ 2014 թ.

Ձև 2

ՏՎՅԱԼՆԵՐ
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ*

1. Կազմակերպության
   - լրիվ անվանումը _____
   - կրճատ անվանումը _____
   - կազմակերպաիրավական ձևը _____
   - հասցեն _____
   - հեռախոսը _____
   - ֆաքսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
2. Գերատեսչությունը _____
3. Համաֆինանսավորման չափը _____ հազար դրամ
4. Կազմակերպության ղեկավարի
   - ազգանունը, անունը, հայրանունը _____
   - ստորագրությունը _____

---

* *Լրացվում է՝ եթե կա համաֆինանսավորող կողմ*

Ձև 3

ՏՎՅԱԼՆԵՐ
ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ*

1. Գիտական կազմակերպության

   - լրիվ անվանումը _____

   - կրճատ անվանումը _____

   - կազմակերպաիրավական ձևը _____

   - հասցեն _____

   - հեռախոսը _____

   - ֆաքսը _____

   - էլեկտրոնային հասցեն _____

2. Գերատեսչությունը _____

3. Գիտական կազմակերպության ղեկավարի

   - ազգանունը, անունը, հայրանունը _____

   - ստորագրությունը _____

---

* *Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար*

Ձև 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՓՈՐՁ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ներառված մասնագետների				
ազգանունը, անունը, հայրանունը	Նշանակումը	Նշանակման դրդիչները	աշխատանքային փորձը	
			ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը / վերապատրաստող կազմակերպությունը (գործունեության ոլորտը)
1	2	3	4	5

Ձև 5

ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

* *Հիմնավորվում է գիտական սարքի/սարքավորման անհրաժեշտությունը կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար (մինչև 3 էջ)*

Հավելված N 2
Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական
բազայի արդիականացման համար գիտական սարքերի և
սարքավորումների ձեռքբերման մրցույթի հրավերի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

_____
(գիտական կազմակերպության/բուհի անվանում)
Տնօրեն/ռեկտոր _____ից
(անուն ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթի մասնակցության սույնով ներկայացվող հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(*ստորագրություն*) (*անուն ազգանուն*)

«____» _____ 2014 թ.